

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ մասի 8-րդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը» բառերից հետո լրացնել «- Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը:» բառերով:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1 հոդվածով.

«Հոդված 2.1. Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը և ստուգումների պլանավորումը

1. Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը ստուգում իրականացնող մարմինների կողմից ստուգումների պլանավորման նպատակով իրականացվող միջոցառումների համալիր է:

Ռիսկը տնտեսավարող սուբյեկտի գործունեության արդյունքում մարդու կյանքին, առողջությանը, շրջակա միջավայրին, պետության, իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքային շահերին, բնական և էներգետիկ պաշարների խնայողությանը վնաս հասցնելու հավանականությունն է՝ հաշվի առնելով այդ վնասի ծանրության աստիճանը:

Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի միջոցով ստուգում իրականացնող մարմինը ստուգումները նպատակադրում է դեպի այն ոլորտները և վերահսկման օբյեկտները, որոնք առավել ռիսկային են:

2. Ստուգումները պլանավորելու նպատակով.

1) Ստուգում իրականացնող մարմինը հետազոտելով իր վերահսկման ոլորտը, մշակում է տվյալ ոլորտում տնտեսավարող սուբյեկտների գործունեության ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշները, որոնք պետք է ներառեն տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտի ռիսկը և/կամ տնտեսավարող սուբյեկտի անհատական ռիսկերի հանրագումարը: Գործունեության ոլորտի ռիսկը ցուցանիշ է, որը հաշվարկելիս հիմք է ընդունվում տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտի կարևորությունն ու վտանգավորությունը՝ ըստ տվյալ գործունեությունից առաջացող հնարավոր բացասական հետևանքների: Եթե տնտեսավարող սուբյեկտը գործունեություն է իրականացնում մի քանի ոլորտներում, ոլորտային ռիսկը հաշվարկվում է ամենառիսկային ոլորտի տվյալներով: Անհատական ռիսկը հաշվարկելիս հիմք են ընդունվում տնտեսավարող սուբյեկտի կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումները, խախտումների պարբերականությունը, խախտումների վերացմանն ուղղված գործողությունները, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը բնութագրող այլ ցուցանիշներ:

Ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատվում են Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից, իսկ դրանց հաշվարկման և գնահատման կարգը հաստատում է ստուգում իրականացնող պետական մարմինը:

2) Ստուգում իրականացնող մարմինը վարում է տվյալների բազա, որը ներառում է տեղեկատվություն իր վերահսկման ոլորտում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով վերջիններիս տրված գնահատականի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է ստուգում իրականացնող պետական մարմինների միջև տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ իրենց տվյալների բազաներում առկա տեղեկատվության փոխանակման կարգը:

3) Ըստ ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշների գնահատման տնտեսավարող սուբյեկտները դասակարգվում են հետևյալ երեք խմբերից որևէ մեկում.

- ա. Բարձր ռիսկայնության,
- բ. Միջին ռիսկայնության,
- գ. Ցածր ռիսկայնության:

3. Ստուգում իրականացնող մարմինը բարձր ռիսկայնության խմբում ընդգրկում է իր կողմից ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների մինչև քսան տոկոսը՝ ըստ ռիսկայնության աստիճանի նվազման:

4. Ստուգումների տարեկան ծրագիրը կազմվում է՝ հաշվի առնելով տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը, և ներառում է հետևյալ տեղեկությունները՝

- 1) ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների լրիվ անվանումները,
- 2) յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտում անցկացված վերջին ստուգման ավարտի ամսաթիվը,
- 3) յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի ռիսկայնությունը,

- 4) յուրաքանչյուր ստուգման անցկացման ժամանակահատվածը:
5. Ստուգումների տարեկան ծրագիրը կազմվում է հետևյալ համամասնությամբ.
- 1) բարձր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտները կազմում են տվյալ տարում ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների առնվազն յոթանասուն տոկոսը,
- 2) ցածր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտները կազմում են տվյալ տարում ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների առավելագույնը հինգ տոկոսը:
6. Ստուգում իրականացնող պետական մարմինները հաստատում են ստուգումների տարեկան ծրագիրը մինչև ստուգումներին նախորդող տարվա դեկտեմբերի մեկը:
- Ստուգումների տարեկան ծրագրում կարող են կատարվել փոփոխություններ Հայաստանի Հանրապետության վարչապետի համաձայնությամբ:
7. Սույն հոդվածի չորրորդ մասի առաջին և երկրորդ կետերով նախատեսված տեղեկատվությունը ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելիս և դրանում փոփոխություններ կատարելիս ենթակա է հրապարակման ստուգում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում ընդունումից հետո եռօրյա ժամկետում և ուժի մեջ է մտնում ընդունումից մեկ ամիս հետո: Սույն կետի դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող ստուգումների վրա:
- Մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի քսանը ստուգում իրականացնող մարմնի ինտերնետային կայքում պարտադիր հրապարակման ենթակա է նաև վերջինիս կողմից նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվությունը, որում նշվում է հաշվետու ժամանակաշրջանում ստուգված և/կամ ուսումնասիրված յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի անվանումը, պետական գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում), տեղեկություններ յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի մոտ անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների քանակի և հիմքերի վերաբերյալ: Նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվության օրինակելի ձևը հաստատում է ՀՀ կառավարությունը:

Հոդված 4. Օրենքի 3-րդ հոդվածը`

1. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1 մասով.
- «1.1 Բոլոր ստուգումները, բացառությամբ հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվող ստուգումների, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող ստուգումների, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների` ներառյալ պետական պատվերի տեղադրման /գնումների գործընթացի/ ճշտության և օրինականության նկատմամբ հսկողությանը, անցկացվում են բացառապես ստուգաթերթերի հիման վրա, որոնք հաստատվում են Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից:
- Ստուգաթերթերը մշակվում են յուրաքանչյուր համապատասխան ոլորտի և գործունեության տեսակի համար` հիմնվելով ստուգում իրականացնող յուրաքանչյուր մարմնի հսկողության ոլորտի և աշխատանքի առանձնահատկությունների վրա:
- Ստուգաթերթի հարցերն ընդգրկում են տնտեսավարող սուբյեկտներին ՀՀ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այն պահանջների սպառիչ ցանկը, որոնց խախտումը կարող է վնաս հասցնել մարդու կյանքին կամ առողջությանը, կենդանիներին, շրջակա միջավայրին, քաղաքացիների, իրավաբանական անձանց կամ պետության գույքային իրավունքներին:
- Ստուգաթերթերի հարցերը ձևավորվում են նվազագույն բավարարության սկզբունքին համաձայն և չեն ընդգրկում այն պահանջները, որոնց պահպանումը չի նպաստում տնտեսավարող սուբյեկտի գործունեությունից առաջացող ռիսկերի նվազեցմանը:
- Ստուգաթերթերի հարցերը չեն կարող անմիջականորեն հղում պարունակել նորմատիվ իրավական ակտերին: Հարցի ձևակերպման համար հիմք հանդիսացող իրավական նորմերը նշվում են առանձին սյունակով յուրաքանչյուր հարցի դիմաց:
- Ստուգաթերթերը պարտադիր կարգով հրապարակվում են ստուգում իրականացնող համապատասխան մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերում:»
2. 2-րդ մասի`
- 1) առաջին պարբերությունում «ստուգման հարցերը» բառերը փոխարինել «ստուգաթերթով նախատեսված այն հարցերի շրջանակը, որոնք անհրաժեշտ է պարզաբանել տվյալ ստուգման ընթացքում (հարկային և մաքսային մարմինների, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների` ներառյալ պետական պատվերի տեղադրման /գնումների գործընթացի/ ճշտության և օրինականության նկատմամբ հսկողության դեպքերում` ստուգման հարցերը)» բառերով,
- 2) առաջին պարբերությունում «ստուգման իրավական հիմքերը,» բառերից հետո լրացնել «սույն օրենքի չորրորդ հոդվածի երրորդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերում` նաև ստուգումն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները, իսկ նույն պարբերությամբ նախատեսված դիմում կամ տեղեկատվություն ստանալու դեպքերում նաև դրանք տրամադրողի տվյալները:»:

3) երկրորդ պարբերությունում «ակցիզային դրոշմանիշների» բառերից հետո լրացնել «հսկիչ նշանների (դրոշմապիտակների)» բառերով:

3. 3-րդ մասում «ակցիզային դրոշմանիշների» բառերից հետո լրացնել «հսկիչ նշանների (դրոշմապիտակների)» բառերով:

4. 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝

«Ստուգում իրականացնող անձինք, բացառությամբ հարկային և մաքսային մարմինների, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման /գնումների գործընթացի/ ճշտության և օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող անձինք, պետք է պատասխանեն բացառապես տվյալ գործունեության համար նախատեսված ստուգաթերթում ընդգրկված հարցերին և ստուգեն դրանք կարգավորող նորմերի կատարման պահանջները:»

Հոդված 5. Օրենքի 4-րդ հոդվածի.

1. 2-րդ մասում.

1) «իսկ հաշվետու տարվա արդյունքներով» բառերը փոխարինել «իսկ ստուգվող ժամանակաշրջանի որևէ ֆինանսական տարվա արդյունքով» բառերով.

2) «օտարերկրյա պետություններ» բառից հետո լրացնել «և քրեական վարույթ իրականացնող մարմիններ» բառերով.

3) «հարցման պատասխանը ստանալուց հետո» բառերից հետո լրացնել «ինչպես նաև ստուգմանն առնչվող փաստաթղթերը հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճռի հիման վրա առգրավված լինելու դեպքում՝ դրանք վերադարձվելուց հետո» բառերով.

2. 3-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«3. Մինևույն պետական մարմնի կողմից մինևույն տնտեսավարող սուբյեկտում ստուգումները, կախված տնտեսավարող սուբյեկտի ռիսկայնության աստիճանից, իրականացվում են հետևյալ հաճախականությամբ.

1) Բարձր ռիսկայնության սուբյեկտների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան տարին 1 անգամ,

2) Միջին ռիսկայնության սուբյեկտների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան 3 տարին 1 անգամ,

3) Ցածր ռիսկայնության սուբյեկտների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան 5 տարին 1 անգամ:

Սույն մասի առաջին պարբերությամբ նախատեսված սահմանափակումները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ.

1. լրացել է ստուգում իրականացնող անձի կամ ստուգում իրականացնող պետական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտին օրենքով նախատեսված իր իրավասությունների շրջանակներում տրված նախկին ստուգման արդյունքում հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարականի (կարգադրագրի) ժամկետը.

2. ստուգում իրականացնող պետական մարմինը Հայաստանի Հանրապետության Վարչապետից ստացել է հանձնարարական, քաղաքացիներից, իրավաբանական անձանցից, անհատ ձեռնարկատերերից ստացել է դիմում, իսկ պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ գրավոր տեղեկատվություն.

1) քաղաքացիների կյանքին, առողջությանը, իրավաբանական անձնաց, ֆիզիկական անձանց, պետության օրինական շահերին, կենդանիներին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելու վտանգի, ինչպես նաև բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման վտանգի մասին.

2) քաղաքացիների կյանքին, առողջությանը, իրավաբանական անձնաց, ֆիզիկական անձանց, պետության օրինական շահերին, կենդանիներին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելու, ինչպես նաև բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման մասին.

3) սպառողի իրավունքների խախտման մասին (այն քաղաքացիների դիմումի դեպքում, որոնց իրավունքները խախտվել են):

3. տնտեսավարող սուբյեկտի կողմից առնվազն երկու հաշվետու ժամանակաշրջանում չեն ներկայացվել օրենքով սահմանված հաշվետվությունները առանց այդ հաշվետվությունները ներկայացնելուն խոչընդոտող պատճառների վերաբերյալ գրավոր բացատրություններ ներկայացնելու,

4. տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը դիմում է ներկայացրել իր մոտ ստուգում իրականացնելու վերաբերյալ,

5. իրականացվում են ակցիզային դրոշմանիշների, հսկիչ նշանների (դրոշմապիտակների) և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների, ինչպես նաև չձևակերպված աշխատողների բացահայտմանն ուղղված ստուգումներ

6. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից իրականացվում են ստուգումներ քաղաքաշինության բնագավառը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված բարձր կամ բարձրագույն ռիսկայնության շինարարության օբյեկտներում կամ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից իրականացվում են ստուգումներ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության համաձայն,

7. համապատասխան լիցենզիա (թույլտվություն) ստացած տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվում է վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի կամ խաղատների կազմակերպման ոլորտի գործունեություն.

8. տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտումներ կատարելու փաստը բացահայտվել և հիմնավորվել է այլ տնտեսավարող սուբյեկտում անցկացված ստուգման ընթացքում.

9. ստուգումը նշանակվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան:

Սույն մասի 1-9-րդ կետերով նախատեսված դեպքերում անցկացվող ստուգումների ընթացքում պարզաբանվում են միայն այն հարցերը, որոնք հիմք են հանդիսացել այդ ստուգումներն իրականացնելու համար:

Այն դիմումները, որոնցով հնարավոր չէ ձշտել դիմումատուի անձը, ինչպես նաև սույն պարբերության 2-րդ կետով նախատեսված փաստերի մասին տվյալներ չպարունակող դիմումները ստուգում անցկացնելու հիմք չեն կարող հանդիսանալ:

Սույն մասով սահմանված տարիներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին:

ՀՀ Կառավարությունը հաստատում է այն կազմակերպությունների ցանկը, որոնցում, կախված վերջիններիս գործունեության ոլորտի հանրության և պետության համար կենսական նշանակությունից, տվյալ ոլորտը վերահսկող ստուգում իրականացնող պետական մարմինների կողմից ստուգումներ բացառության կարգով կարող են իրականացվել վեց ամիսը մեկ անգամ:»

3. 4-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Եթե առկա են սույն օրենքով սահմանված վերստուգումներ անցկացնելու իրավական հիմքերը, ստուգող մարմինն իրավունք ունի սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով մեկ ստուգման համար սահմանված ժամանակահատվածում իրականացնել կրկնակի ստուգում: Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացվող տնտեսավարող սուբյեկտի թեմատիկ ստուգումից հետո նույն տնտեսավարող սուբյեկտում նույն ժամանակաշրջանի համար կատարվող պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ձշտության ցանկացած ստուգում համարվում է կրկնակի ստուգում:

Կրկնակի ստուգման անցկացման հիմքեր ներկայացրած անձինք կրկնակի ստուգման հետևանքով այդ հիմքերը չհաստատվելու (չհիմնավորվելու) դեպքում ենթակա են պատասխանատվության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 6. Օրենքի 5-րդ հոդվածի.

1. առաջին մասում «մեկ տարվա ընթացքում» բառերը փոխարինել «սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված ժամանակահատվածում» բառերով, իսկ «սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված և 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված» բառերը փոխարինել «սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության 1-9 կետերով սահմանված, ինչպես նաև» բառերով:

2. «թ» ենթակետում «սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված և 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված» բառերը փոխարինել «սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության 1-9 կետերով սահմանված, ինչպես նաև» բառերով:

Հոդված 7. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

«Հոդված 6. Ստուգման արդյունքների ամփոփում

1. Ստուգման հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետն ավարտվելուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում ստուգումն իրականացնող անձը ստուգաթերթի հարցերի պատասխանների, իսկ հարկային և մաքսային մարմինների, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների` ներառյալ պետական պատվերի տեղադրման /գնումների գործընթացի/ ձշտության և օրինականության նկատմամբ հսկողության դեպքերում` հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա ամփոփում է ստուգման արդյունքները` խախտումներ չհայտնաբերելու դեպքում կազմում տեղեկանք, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում` ակտի նախագիծ: Տեղեկանքը` ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, երեք աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին` առարկություններ ներկայացնելու նպատակով:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը:

Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացնելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը` ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում ակտի նախագծի վերաբերյալ առարկություններ ներկայացնելու դեպքում ստուգող մարմինը ուսումնասիրում է դրանք և առարկություններ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ակտի մեկ օրինակը` ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է

տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ստորագրմանը: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից ներկայացված առարկությունները կցվում են ակտին և կազմում նրա անբաժանելի մասը:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում ակտում այդ մասին կատարվում է համապատասխան գրառում:

Եթե տնտեսավարող սուբյեկտը պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպություն է, ապա ակտի մեկ օրինակն ուղարկվում է պետական կառավարման վերադաս մարմնին:

Ստուգող մարմնի պաշտոնատար անձը ստուգման ակտի հիման վրա, օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում, տնտեսավարող սուբյեկտին տալիս է հանձնարարականներ (կարգադրագրեր) բացահայտված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ՝ սահմանելով ժամկետներ դրանց վերացման համար:

2. Խախտումներ չհայտնաբերելու դեպքում կազմված տեղեկանքում արձանագրվում են այն կազմելու ամսաթիվն ու վայրը, ստուգումն իրականացնող համապատասխան պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի անվանումները, ստուգող պաշտոնատար անձանց կազմը, ստուգման նպատակը, ժամկետը, արդյունքները:

Ակտում նշվում է՝

- 1) ակտի անվանումը, համարը, կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,
- 2) ստուգում իրականացնող պետական մարմնի անվանումը,
- 3) ստուգում նշանակելու մասին հրամանի կամ հանձնարարագրի ամսաթիվն ու համարը,
- 4) ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը,
- 5) ստուգվող տնտեսավարող սուբյեկտի անվանումը, ինչպես նաև վերջինիս պաշտոնատար անձի կամ նրան փոխարինող անձի անունը, ազգանունը,
- 6) ստուգում անցկացնելու ամսաթիվը, վայրը և ժամանակահատվածը,
- 7) փորձագիտական եզրակացությունը՝ ստուգման ընթացքում փորձաքննություն անցկացնելու դեպքում: Փորձագիտական եզրակացությունը կցվում է ակտին և կազմում է դրա անբաժանելի մասը.
- 8) ստուգաթերթի անվանումը, ընդունման ամսաթիվը, հերթական համարը, որում ընդգրկված հարցերի շրջանակներում իրականացվել է ստուգումը, ինչպես նաև ստուգաթերթի այն հարցերը, որոնց պատասխանները հիմք են հանդիսացել խախտումն արձանագրելու համար, բացառությամբ հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվող ստուգումների, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող ստուգումների, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման /գնումների գործընթացի/ ճշտության և օրինականության նկատմամբ հսկողության դեպքերի,
- 9) ստուգման արդյունքում բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը, եթե հնարավոր է որոշել, և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել,
- 10) պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը,
- 11) տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից ներկայացված առարկությունների ընունման վերաբերյալ նշումներ:

Եթե ստուգման ընթացքում արձանագրված խախտումները և դրանց հիման վրա տնտեսավարող սուբյեկտին առաջադրված պատասխանատվությունը հիմնվում է համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների կողմից կամ նրանց միջև կիրառված գների վերաբերյալ ստուգումն իրականացնող մարմնի կողմից կատարված համեմատական ուսումնասիրությունների և վերլուծությունների վրա, ապա ստուգման ակտին կցվում է նաև նշված ուսումնասիրության և վերլուծության վերաբերյալ տեղեկանքը:

3. Ստուգումների հետ կապված վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով:

Հոդված 8. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում «օրենքով սահմանված ժամկետներում» բառերը փոխարինել «երկու ամսվա ընթացքում, եթե օրենքով այլ բան չի նախատեսվում» բառերով:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը և գործում է Օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված այն մարմինների համար, որոնք օրենքով սահմանված կարգով հաստատում և ներդնում են ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով մշակում, հաստատում և հրապարակում են իրենց հսկողության ոլորտի ստուգաթերթերը:

Սույն հոդվածի առաջին մասի պահանջներին չբավարարող ստուգում իրականացնելու իրավասությամբ օժտված մարմինները ստուգումն իրականացնում են սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված ցածր ռիսկայնության սուբյեկտների համար սահմանված հաճախականությամբ, բացառությամբ հոդվածի երկրորդ մասով սահմանված դեպքերի:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐԱՏԻ ԵՎ «ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՖԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՖԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

h/h	Հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Վ. Այվազյան	Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող փոփոխության վերաբերյալ՝ օրենքի 2.1. հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ մասով. «8, Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորած մարմինը ամփոփում է ստուգում իրականացնող յուրաքանչյուր պետական մարմնի կողմից հաստատված ստուգման տարեկան ծրագրերը և նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների վերաբերյալ հաշվետվությունները և իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում ստուգումների տարեկան ամփոփ ծրագիրը և նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների արդյունքները:»	Ընդունվել է մասամբ:
2.		Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող փոփոխության վերաբերյալ՝ օրենքի 2.1, հոդվածի 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ. «Մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի քսանը ստուգում իրականացնող մարմնի ինտերնետային կայքում պարտադիր հրապարակման ենթակա է նաև վերջինիս կողմից նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների վերաբերյալ հաշվետվությունը, որում նշվում է հաշվետու ժամանակաշրջանում ստուգված յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի անվանումը, պետական գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում), տեղեկություններ յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի մոտ անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների քանակի և հիմքերի վերաբերյալ: Նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվության օրինակելի ձևը հաստատում է ՀՀ կառավարությունը:»	Ընդունվել է:
3.		Նախագծի հոդված 3-ի 6-րդ կետի երկրորդ պարբերությունը հանել:	Ընդունվել է մասամբ: Ստուգումների տարեկան ծրագրում կարող են իրականացվել փոփոխություններ միայն ՀՀ վարչապետի համաձայնությամբ:
4.		Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետը լրացնել հետևյալ բառերով. «իսկ նույն պարբերությամբ նախատեսված դիմում կամ տեղեկատվություն ստանալու դեպքերում նաև դրանք տրամադրողի տվյալները:»	Ընդունվել է:
5.		Նախագծի հոդված 5-ի 1-ին կետի 2-րդ ենթակետի «գրավոր տեղեկատվություն» բառից հետո հանել «կամ զանգվածային լրատվական միջոցների հրապարակումներից պարզվել է» բառերը:	Ընդունվել է:
6.	ՀՀ ԱԺ պատգամավոր Ս.	ՀՀ օրենքի նախագծում հստակեցնել ձխսի վրա հիմնված ստուգումների	Չի ընդունվել: Կապված տեսչության

	Ավետիսյան	մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշները և դրանց հաշվարկման ու գնահատման կարգը հաստատվի ՀՀ կառավարության կողմից:	գործունեության ոլորտի առանձնահատկություններից՝ ռիսկայնության չափանիշները տարբեր են, ուստի տարբեր են նաև դրանց մեթոդաբանությունները: Հնարավոր չէ մշակել ունիվերսալ չափանիշներ, որոնք կգործեն ստուգում իրականացնող բոլոր մարմինների համար, ուստի դրանք կհաստատվեն կառավարության որոշմամբ յուրաքանչյուրի համար առանձին-առանձին:
7.	ՀՀ ԱԺ պատգամավոր Ս. Բալասանյան	1. Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասը անհրաժեշտ է հանել, քանի որ ըստ սահմանված ռիսկայնությունը որոշող չափանիշների տնտեսավարող սուբյեկտներն հստակ կարող են դասակարգվել ըստ ռիսկայնության խմբերի և այդ թիվը կանխորոշել կամ սահմանափակել օրենքով անտրամաբանական է, մասնավորապես, եթե բարձր ռիսկայնության խմբում հայտնվեն 20 տոկոսից պակաս սուբյեկտներ, ապա օրենքի պահանջը կատարելու համար ուն հաշվին պետք է լրացվեն և ինչ սկզբունքով պետք է կատարվի լրացվող սուբյեկտների ընտրությունը, իսկ եթե ավել լինեն, ապա որ սուբյեկտներն են պետք է հանել ցանկից և ինչ սկզբունքով, բոլոր դեպքերում հնարավոր չի լինի պահպանել համաչափ վարչարարության և միատեսակ մոտեցման սկզբունքը, որը վարչական մարմինը պարտավոր է պահպանել:	Ընդունվել է մասնակի: Հոդվածի մասը համապատասխանաբար խմբագրվել է:
8.		2. Նախագծի 3-րդ հոդվածի 6-րդ մասը անհրաժեշտ է լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ. «Ստուգումների տարեկան ծրագիրը հրապարակած վարչական մարմինը պարտավոր է ստուգման անցկացման ամսաթվից առնվազն երեք ամիս շուտ գրավոր ծանուցել այն տնտեսավարող սուբյեկտներին, որոնք ներառվել են այդ ծրագրում՝ ըստ անհրաժեշտության կատարված փոփոխությունների արդյունքում:»	Ընդունվել է մասնակի: Օրենքի նախագծում նախատեսվել է դրույթ, ըստ որի ստուգումների տարեկան ծրագրի փոփոխություններն ուժի մեջ են մտնում ընդունումից մեկ ամիս հետո:
9.		3. Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասում նոր խմբագրությամբ շարչադրված օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության 2-րդ կետը անհրաժեշտ է լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «դ» ենթակետով. «դ) սույն կետում նշված հիմքերով ստուգումները անցկացվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի նախնական համաձայնությամբ, իսկ բացառիկ դեպքերում՝ կապված անհապաղ ստուգում անցկացնելու պատճառաբանված անհրաժեշտությամբ, ստուգում անցկացնող մարմինը ստուգումները սկսելուց 24 ժամվա ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչապետին գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ կցելով անհապաղ ստուգում անցկացնելու անհրաժեշտության	Թեև առաջարկն ընդունելի է, այնուամենայնիվ քանի որ դրա սահմանման հետ միաժամանակ անհրաժեշտություն կառաջանա մշակել նաև նոր ընթացակարգեր, ուստի առաջարկությունը կքննարկվի ստուգումները կարգավորող նոր օրենքի նախագծի մշակման շրջանակներում:

		հիմնավորման վերաբերյալ տեղեկանք»:	
10.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող փոփոխության վերաբերյալ՝ օրենքի 2.1. հոդվածի 2-րդ մասը 2)-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է ստուգում իրականացնող պետական մարմինների միջև տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ իրենց տվյալների բազաներում առկա տեղեկատվության փոխանակման կարգը:»	
11.		««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 3-րդ հոդվածի 7-րդ մասում «հաստատման պահից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ընդունումից հետո» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջները:	
12.		Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի կետերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասին:	
13.		Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասում «խմբագրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «բովանդակությամբ» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:	
14.		Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետից հետո նախատեսված պարբերության կապակցությամբ հայտնում ենք, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համաձայն՝ հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:	
15.		Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում «հաստատագրված վճարների մասին օրենքով» բառերն անհրաժեշտ է փոխարինել ««Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով» բառերով:	
16.		Նախագծի 5-րդ հոդվածում նախատեսված է երկու 2-րդ մաս:	
17.		Նախագծի 5-րդ հոդվածի երկրորդ 2-րդ մասից անհրաժեշտ է հանել «առաջին» բառը:	
18.		Նախագծի 6-րդ հոդվածում «պարբերությունում» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասում» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջների:	
19.		Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասում «տեղը» բառն անհրաժեշտ է	

		փոխարինել «վայրը» բառով:	
20.		Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասում «պարբերության» և «պարբերությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել համապատասխանաբար «մասի» և «մասով» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջները:	